

կհիմնէ սխալ ձայնագրելով և ուղիղ երգելով, այսինքն թէ երկու անգամ երկուքն վեց կանէ ըսելով կաւանդէ և կգրէ, իսկ կարդացած ժամանակ՝ 4 կըկարդայ:

«Թէ դասագրքին և թէ մանկական երգարանին մէջ սխալ ձայնագրած և ուղիղ երգած երգերն եթէ գործնականի վերայ առնելով երգէր, յայնժամ պիտի տեսնէր թէ երգած երգին ձայնէր իւր կազմած ելեւէջով ուրիշ եղանակի ձև կառնէին:

«Արդ, սիրելիդ իմ Տիրացու Սահակ, դեռ Եւրոպական ձայնագրութեան այբը չճանաչող մի անձն կերթայ հրապարակ կելլէ և զինքը երկու ձայնագրութեանց հմուտ ձևացնելով մինչև իսկ մեր դասագրքին ալ չհաւանիր և դասագիրքին համ ու հոտ չունեցող մի անպիտան բան կշինէ իմաստակորէն, կհարցնեմ թէ այսպիսին պէտք չէ՞ որ պատժուի հրապարակաւ իւր արժանիքն ցոյց տալով իրեն. այս մասին Ձեզ պարտաւոր կընեմ. և եթէ դուք լռէք, Նորա սխալ գրութիւնը ընդունած պիտի ըլլաք, և յայնժամ ես պիտի պարտաւորիմ ցաւօք սրտի իջնել հրապարակ, եթէ պէտք լինի մինչև իսկ տեղւոյդ լրագրաց միջոցաւ իսկ ցուցնել նորա եղծումներն և իմաստակութիւնքն զօրաւոր արհեստական փաստերով:

«Նամակիս պատասխանն շուտով գրես ինձ, որ եթէ պէտք լինի՝ իր հակասութիւնքն մի առ մի գրեմ ձեզ»:

Ն. Ս. ԹԱՇԱԵԱՆ.

43 Մայիսի 1881 թ.

Յուսումնարան դպրաց դասու աւագ եկեղ. Բուժքաբույի.

Կոստանդնուպօլիս:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Տ. Ե. Ս. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Մայիսի 21 ին փառաւոր և արժանաւայել հանդիսով տօնուեցաւ Ս. Էջմիածնում՝ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Օծման ԺԳ. տարեգարձը: Նախընթաց երեկոյեան մեծահանդէս նախատօնակ կատարուեցաւ: Տարեգարձի օրը առաւօտեան ժամերգութիւնից յետոյ՝ ժամը 8ին միաբանական Ս. Ուխտը Գէորգեան ճեմարանի, ժառանգաւորաց ուսումնարանի և Վաղարշապատու երկսեռ դպրոցաց ուսանողներին, ուսուցիչներին և ժողովրդեան հետ միասին հրաւիրեցան սովորական Մաղթանքը կատարելու բազմերախտ Հայրապետի Սրբազան կենաց համար: Հանդէսը սրտաուռ չէր: Մաղթանքից յետոյ կարդացուեցան չափածոյ ուղերձ Գ. Ճեմարանի սանունց կողմէն և քանի մի ճառեր Վաղարշապատու երկսեռ Դպրոցաց ուսանողներին կողմից: Մաղթանքից յետոյ միաբանական Ուխտը ուսանողները իւրեանց ուսուցիչներով և համայն ժողովուրդը մատան ի համբոյր Ս. Աջոյ Վեհափառ Հայրապետի:

Վեհափառ Հայրապետը իւր բարեմաղթական և խրատական քաղցր խօսքերի մէջ արտասանեց և այս մի քանի իմաստալից խօսքերը. «Եւրօքանչիւրքս ըստ իւրում կարգի և աստիճանի ծառայենք մեր Ս. Եկեղեց.

այ և Ազգի պայծառութեանը. ինչպէս եւս, որ շնայելով անձնական
ովորութեանս, նուիրուած եմ միշտ իմ սիրելի Ազգի և Եկեղեցւոյ ծա-
ռայութեանը ։

Մեծահաճութեամբ Պատարագից յետոյ կէս օրին պատրաստուած էր վա-
յելու ճաշ, որ միաբանութեանը սեղանակցելու հրաւիրուեցան և ժո-
ղովրդականք և այլևայլ ույցելուք, ճաշի ժամանակ ճառախօսեցան Գերա-
զատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոսը և Բարեշն. Ըմբրոսիոս Վ. Ռուբինեան
իղեցկոպէս բացատրելով աւուր հանգիսի նշանակութիւնը և բարեմաղ-
թելով Ազգասէր և Մեծագործ Հայրապետին առողջ և երկայն կեանք,
որոց յաջորդեցին համայն հանդիսականաց « Կեցե՛ ներքը, Ժառանգաւորաց
ուսումնարանի ազգային սրտառու իրաւունքը և հրացանածգութիւնները,
Ե. Ճեմարանի սանունքը ևս իւրեանց Գեր. Վերատեսչի և Մեծ. ուսու-
ցիչների հետ միասին լի երախտագիտական զգալմամբք տօնումին Ճեմա-
րանում սոյն փառաւոր հանդէսը վայելու ճաշով և ազգային քաղցր
երգերով ։

Երեկոյեան ճրագովառութիւն էր. և Գ. Ճեմարանի սանունքը իւրեանց
քաղցր երգերով զուարճացնումէին ժողովրդոց խումն բազմութեանը մին-
չ ժամը 10ր. :

Ահա մաղթանքի ժամանակ Ճեմարանի սանունց կողմանէ Վեհափառ
Հայրապետին ուղղուած ուղերձը ։

Ո Ւ Ղ Ե Ր Ձ

Հիմ ոչ այսօր փողն Յարեւան ի պազմանց ի Մասնաց
Ըզտարեկարձ Հայրապետին հնչեցէ յունկն Հայկազանց
Աւետար փանդիող Հայոց. երգեա օն գողտր ի գեղ գեղ
Եւ զարմիցէ տուն հայրենի ի սիրտ բերկրեալ և ի գեղ ։
Զի զիտապետ պարգեւեալ. Հայաստանեայց Գերարփի
Որ զօծելոց Պարթևազանցն ըզգահ օւնի ըզտեղի ։
Ըզհաւատոյ զանչէջ բապտիւր լուցեալ ի լոյս երկնային
Եւ զարահետ հարդէ կենաց վառեալ ի գէն հրդօրին ։
Երարատեան լերինք բարձունք ըզնօրոյ զարդ և ըզգեղ
Զերդ վաղեմին պրծնեալ զփառս արկէք զձեռօք ձորձ շրքեղ ։
Ի կենսաբեր դարաստանայ ի խնկաւեան Ադինայ
Ծաւալեսցին սողօխք կենաց ի վերադարձ մըշտակայ
Երկնապարգե օրպէս ի հինան Ահարօնեան սուրբ մական
Բաշխող շնորհաց բոյդ ծաղկեցաւ փայլ ի պարգևս աստուածեան ։
Ծաւալելոյս ոչ ի վիմէ արբուցանել զպատուք ։
Այլ զիմաստից ջամբեալ ըզկաթն հանել ի լոյս անծածուկ ։
Որ ի վերայ աւերակաց սուրբ տաճարի հիմն արկեր ։
Ի պատմութեան Հայաստանեայց արձան անմահ կանգնեցեր
Վարձահատոյցն Երդարոց Տէր Հօրդ մերում օծելոյ

Զանաճութեան երկնից օծիտ կապեցե թագ վեհ զխոյ:

Աստի մազթեկք մշտամբն ունջ ի մի բարբառ խանդակաթ:

Յամայր ամօք երջանկացիս մեզ ի բերկրանս անընդհատ:

Ի Դէմաց Համբըխն լալի. Գեղարգ. Ճէճ:

Աղալէրք Զ. Դաւ. Առաքիլ Վարդանէս:

* *

* *

Մայիսի 5ից սկսուեցան Ք. Ճեմարանի աշակերտաց հարցաքննութիւն-

ները և վերջացան Յունիսի 5ին. Ամենայն աւանդած առարկաների մէջ

աշակերտաց ցոյց աւանդ յաջողութիւնը ապացուցանուեալ որ Յարգոյ ու

սուցիչները ըստ մեծի մասին բարեխղճաբար են կատարել իւրեանց պար-

տաւորութիւնները: Յունիսի 6ին հանգիստաւ կերպով կարդացուեցաւ

արձանագրութիւնը որ համառօտ ատենախօսութիւններ արին Ճեմարանի

Կառավարիչ Փերապ. Էնդրէաս Արքեպիսկոպոսը և Քարեշն. Սիրեղ և

Եմբրոսիոս Վարդապետները:

* *

Մայր Ամսոյս ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտաց հարցաքն-

նութիւնը սկսուեցաւ Մայիսի 28ին և վերջացաւ Յունիսի 5ին. Ներկայ

էին զանաւոր Ք. Ճեմարանի կառավարիչը և ուսուցիչներից մի քանիսը

և Միաբանները: Քննութիւնները յաջող անցան. ուսուցիչները աւ հասա-

րակ արժանի են հրապարակական շնորհակալութեան:

* *

Ըզդիս Անհախաւ Հայրապետը յարգելով Տփլիսու. Հայոց դպրոցաց

ուսուցիչների բարենպաստակ խնդիրը բարեհաճեցաւ յանձնել Ս. Սինօլին

հրամանագրից ամենայն թեմական Ատենից, որ քաղաքների եկեղեցեաց

գումարից տուելով, իսկ զիւրական ձեռնհաս եկեղեցեաց գումարից նոյն-

րութեւր նպաստեն այն ուսուցիչների ձանապարհամարուցը, որոնք կցան-

կան ներկայումս Տփլիսում կայանալի Հայ ուսուցչական ժողովին:

* *

Ըզդիս Անհախաւ Հայրապետը բարեհաճեցաւ բարեշն. Պեղոյ վարդա-

պետ Սուրենեանցին իւր խնդրանաց համաձայն արձակել Ըզէրասնկրապոյու

փոխանորդական պաշտանից և ի տեղի նորա նշանակել բարեշն. Յուսիկ

վարդապետ Մալխիանան: Մեծայոյս եմք որ՝ բարեշն. Հայրը իւր խոհա-

կան և անխնայ գործունեութեամբ կարգիւնաւորել թէ Անհախաւ Հայ-

րապետի իւր վերայ ունեցած բարի համարմունքը և թէ իւր տեսչութեան

յանձնուած ժողովրդականաց ազգագրաւոր յոյսն ու անկախութիւնները:

* *

Փերապատիս Քրիզոր եպիսկոպոս Ըզափիրեանցը Ըզդիս Անհախաւ Հայ-

րապետի ամենակարեւոր յանձնարարութեամբ Ըզրիկի 27ին ուղևորեցաւ

ի Ս. Պետրբուրգ և ի Դորպատ:

* *

Թիֆլիզից մեզ գրածն:

«Տոբ եղանակները կրկին ծանոցանալ Մշակի Դ. Ա. խմբագրի ուղեգիր վերայ, որոյ

երեսակցութեան գլխաւոր առարկայ աւելի Ա. Լ. Բիւրաճեան է, որ շնորհիւ վառ բաներ

ստանալ եւ գրեալ երեսակցում է. Աստուած շատ բաշխէ յայտ. »

«Բազումք ծրմաղում են նորա վերայ, հայ բնիկները զգուսնաց են հեռանում.

իսկ ողորմելի Դ. Ա. տարաւոր անձնատուր եղած է. Գոռա թիւ 1-ը անուամբ »

Մեկը կարեկցում ենք եւ Աստուածանից բաշխութիւն ենք բարեխնդրում:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴՈՒՅԷ ԷԶՄԻԱՍՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՆՏ.